ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 5. Տրանսպորտային համակարգի պետական կառավարումը

1. Տրանսպորտային համակարգի պետական կառավարումն իրականացնում է տրանսպորտային համակարգի պետական լիազորված մարմինը:

2. Տրանսպորտային համակարգի պետական լիազորված մարմինն ունի հետևյալ հիմնական խնդիրները՝

ա) տրանսպորտի ոլորտում միջպետական համագործակցություն.

բ) անկախ սեփականության ձևից՝ տրանսպորտի շահագործման տեխնիկական նորմերի և ստանդարտների մշակում.

գ) տրանսպորտի բոլոր տեսակների համար պետական ծրագրերի և հայեցակարգերի մշակում, տեխնիկական քաղաքականության մշակում և իրագործում, ուսուցում և կադրերի որակավորման բարձրացում.

դ) տեղեկատվության համակարգում, վերլուծություն և կանխատեսում.

ե) ուղևորափոխադրումների միասնական համակարգի կազմակերպում.

զ) սահմանված կարգով տրանսպորտի բոլոր տեսակների գործունեությունը կանոնակարգող նորմատիվ և տեխնիկական նորմատիվ ակտերի մշակում և հաստատում.

~~է) տրանսպորտի ոլորտի նորմատիվ իրավական ակտերի կատարման վերահսկողության իրականացում.~~

ը) օրենսդրությամբ սահմանված լիազորությունների շրջանակում՝ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ գործունեության համակարգում:

Հոդված 7. Տրանսպորտային գործունեության լիցենզավորումը

1. Տրանսպորտային գործունեության առանձին տեսակներ, որոնց ցանկը սահմանվում է օրենքով, իրականացվում են լիցենզիայի հիման վրա:

2. Լիցենզավորումը ~~և այդ գործունեության հետ կապված վերահսկողությունն~~ իրականացնում է տրանսպորտային համակարգի պետական լիազորված մարմինը:

Հոդված 23. Տրանսպորտային օբյեկտների և բեռների անվտանգությունը

1. Տրանսպորտային օբյեկտների և բեռների փոխադրման անվտանգությունն ապահովելու, տրանսպորտում հակահրդեհային կանխարգելիչ միջոցներ ձեռնարկելու և հրդեհների ու վթարների հետևանքները վերացնելու համար ~~տրանսպորտային համակարգի պետական լիազորված~~ տրանսպորտի բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ենթակայության տակ ստեղծվում է անվտանգության հատուկ ծառայություն:

2. Անվտանգության հատուկ ծառայությունը պետք է ունենա օբյեկտների և բեռների պահպանության, հակահրդեհային անհրաժեշտ հատուկ միջոցներ, որոնց օգտագործման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով:

3. Անվտանգության հատուկ ծառայության կանոնադրությունը, համազգեստի և տարբերանշանների նմուշները հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 28. Տրանսպորտային օրենսդրության կատարման վերահսկողությունը

1. Տրանսպորտային գործունեության մասնակիցների կողմից տրանսպորտի մասին օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է ~~տրանսպորտային համակարգի պետական լիազորված~~ տրանսպորտի բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը՝ իր իրավասության սահմաններում համագործակցելով օրենսդրությամբ լիազորված պետական այլ մարմինների հետ:

2. Տրանսպորտային միջոցի զննում կարող է կատարվել միայն Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում և կարգով:

3. Տրանսպորտի բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը՝

1) իր իրավասության սահմաններում վերահսկողություն է իրականացնում տրանսպորտի բնագավառի իրավական ակտերի, լիցենզիաների և միջազգային թույլտվությունների պահանջների կատարման նկատմամբ.

2) կիրառում է օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցներ տրրանսպորտի բանագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման համար.

3) կատարում է օրենքով իրեն վերապահված այլ լիազորություններ: